

Վ. ԽԱՐՉԵՆԿՈ

ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄՔԸ

ԹԻՖԼԻՍ—1924




Վ. ԽԱՐՉԵՆԿՈ

ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Թարգմանեց

ԱՆ. ՂԱԶԱՐՅԱՆ




A II 23837

Այս գիրքը ստացվում է

Ռուսաստանի, Կովմառնիստ. Կուսակցության Անդրկովկ. Յեղերային

Կովիսեյի պատվերով



Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Առաջարկվելիք գրքիս չորրորդ տպագրության մեջ մի քանի գլուխները յես ընդարձակել և լրացրել եմ՝ սկսած 1914 թ. մինչև մեր որերը հավաքածս անձնական փորձերի ավյալներով:

Հորթերի խնամատարության համար անուցման յերկու ձև դոյություն ունի:

1) Մօր տակին և 2) առանց մոր, յերբ հորթերին ծնվելուն պես տեղափոխում են հորթանոցը և նրանք իրենց մորը կարող են հանդիպել միմիայն մեծացած ժամանակը, այսինքն՝ արտատեղում:

Հորթուկներին կովերի (իրենց մոր) տակ մեծացնելու դեպքում, հիվանդության և մահացության տուգուր լինում և շատ չնչին, իսկ յերբ հորթուկներին կաթ են տալիս դուլերից և այն ել անուշադիր, անշնորք ձեւով, պատահում և ճիշտ հակառակը, մանավանդ՝ յեթե հորթանոցը ունենում և վորեւ պակասություն:

Կովի տակ մեծացնելն ել ունի այն պակասությունը, վոր դրանից կովի կաթնատվությունը խիստ կերպով ընկնում և. սա ել առաջանում և նրանից, վոր նախ հորթերը կաթ շատ են ծծում, յերկրորդ՝ կովերը կթելու ժամանակ «կաթը վեր են բաշում», վորից կաթը հափազանց պակասում և: Դրանից հորթերին բաժին և ընկնում ամենից յուղալի կաթը, վորից նրանք հափազանց զիրանում են, իսկ այդ հանգամանքը շատ վատ և անդրադառնում նրանց կաթնատվության վրա: Պետք և ավելացնել, վոր հորթերին կովի տակ մեծացնելը շատ թանկ և նրատում, ուստի անուցման այդ ձևը հանձնարարելի չե միմիայն ամենարացառիկ դեպքերում:

Վերջին տարիներս ուշադրությամբ հետեւելով հորթերի անունդ տալուն, կը ցանկանայի ընթերցողներին հաղորդել իմ մի քանի դիտողություններն ու յեզրակացությունները:

Այդ դիտողութիւններէ հիման վրա կարող եմ ասել, վոր ամենից առաջ հորթանոցը պիտի լինի տաք (ամենից լափե ե, յեթե հորթանոցի տաքութիւնը $10-12^{\circ}$ R-ի) և հետո՝ հատակն ել տախտակից, իսկ փռած ծղոտը՝ հարկավոր քանակութեամբ. չոր, փոշ փոշոտ և փոշ ել սառը: Դրա համար ամենից լափը աշնանացանի ծղոտն և—դարմանը: Ասելիքս ավելի պարզելու համար կարող եմ հետեյալ որինակը բերել: Պետրովսկ. գյուղատնտեսական ակադեմիայի ֆերմայի անասնոցի ընդհանուր վերանորոգութեան ժամանակ, հորթանոցի վառարանը նորոգվել չեր, ուստի մեծ սառնամանիքներէ ժամանակ նրա տաքութիւնն իջնում եր մինչև $+4^{\circ}$ և $+1^{\circ}$: Բացի դրանից, բետոնից շինած հատակը այնքան սառն եր, վոր սկսեց ազդել նաև հորթերի առողջութեան վրա: Այս յերկու հանգամանքը պատճառ եյին դառնում հորթերի հաճախակի հիվանդանալուն և սատկոտելուն, վորը տեղի ունեւ 1910—1911 թվականի ձմեռը: Քանի դեռ ջերմութեան աստիճանը դուրսը— 12° կամ— 15° -ից ցածր չեր լինում, հորթանոցում նա հավասար եր $+6^{\circ}$ և $+8^{\circ}$, իսկ յերբ սառնամանիքները խստացան և հասնում եյին մինչև 15° , հաճախ նաև մինչև 25° , իսկույն և յետ առաջ եյին գալիս հորթերի հիվանդութեան և սատկոտելու դեպքեր՝ նրանց կյանքի առաջին որերին: Իհարկ ե, բացի այս պատճառներից, կային և այլ պատճառներ, մասամբ արդեն պարզաբանված (որինակ այն հորթերը, վորոնք ծնված եյին տուբերկուլինի պատվաստին ըյակցիա տվող կովերից), մասամբ ել մինչև որս ել՝ դեռ չպարզաբանված:

1911 թվի ամառը հորթանոցումը շինվել ե նոր վառարան և այժմ ջերմութիւնը չի իջնում $+10^{\circ}$ -ից ցածր: Ամբողջ հորթանոցում բետոնի հատակի վրա կարիք զգացվեց փայտեւ ձգել և տախտակ շարել, այնպես վոր տախտակի և բետոնի հատակների մեջ կա ողի շերտ: Վոտներէ տակի ծղոտն ել միշտ փովում և մաքուրը, տաքը և հարկավոր քանակութեամբ, վորպեսզի հորթի համար ե՛ փափուկ լինի, ե՛ տաք:

Բայց այս բարելավումները հնարավոր չեղան միմիայն 1911 թվի ամառը. դրա նախորդ ձմեռը հորթերն անցկացրին անհարմար հորթանոցում, ուստի ցրտից առաջացած հիվանդութիւններից խուսափելու համար անհրաժեշտ եր հորթերին թողնել կովերի տակ՝ մեկից մինչև յերեք շաբաթ, նայելով հորթուկի տեսքին. յեթե նա տեսքով աշխույժ եր և ամուր, մորից բաժանվում եր մի շաբթական հասակում, իսկ յեթե թույլ եր, այն ժամանակ

թողնվում եր կովի տակ յերեք շաբաթ: Ձեռք առած այս միջոցների շնորհիվ հիվանդությունները վերջացան:

Ֆերմայում պահվում են շվիցային կովեր, վորոնց սերունդը ծախվում է շատ լավ գնով, բացի շվիցականից կային և 16—20 ուսական կովեր: Այդ կովերից ստացվում են հորթեր, վորոնք յերեք չեն սնվում կովի տակ, բայց հնայելով այդ բանին հիվանդության դեպքեր նրանց մեջ չեն յեղել: Այս հանգամանքը մի անգամ ևս դալիս է հաստատելու այն միտքը, վոր հորթերի ծագումը մեծ ազդեցություն ունի նրանց հակման վրա՝ դեպի հիվանդությունները:

Ֆերմայում կովերի խնամքը կարելի չէ համարել որինակելի: Պահվում են շատ մաքուր, հաճախ լվանում են, իսկ տակի ծղոտն էլ տրվում է լավ հատկությամբ և հարկավոր քանակությամբ: Կթելու ժամանակ պահպանվում է լավ մաքրություն, կթած կաթը իսկույն և յետ տրվում է հորթերին: Հորթերին կաթ տալու դույլը մանրակրկիտ լվացվում է, իսկ կաթը լցնելուց առաջ յեռացած ջրով վողովում: Հորթերին կերակրողները շատ փորձված են ու հմուտ: Յեվ հնայելով այս բարենպաստ պայմաններին, այնուամենայնիվ հիվանդության դեպքեր եյին յերեվում—դրանց պատճառը, ի միջի այլոց, նաև սառը բնակարանն էր:

Ինչպես յերևում է, հիվանդանում են այն հորթերը, վորոնք ծնվել են նոյեմբերից մինչև ապրիլ, այսինքն ամենացուրտ ժամանակ: Տարվա մնացած ժամանակներին հիվանդությունները հազվադեպ եյին:

Մոսկվային մոտ Ֆերմա ունենալով, ցանկալի չէ վորքան կարելի չէ շատ կաթ ստանալ աշնան և ձմեռվա ամիսներին. այդ իսկ նպատակով կովերի ծնելու շրջանը պիտի տեղափոխել գարունքից—աշունքը: Առաջ կովերի մեծամասնությունը ծնում էր փետրվարի կեսից մինչև ապրիլի կեսը, իսկ հիմա ձմեռը, յերբ սառնամանիքներն են: Սառնամանիքներին կովերին դրոսանքի չեն տանում, տավարանոցը (գոմը) շատ քիչ է ողափոխվում, վորովհետև պահվում է մշտական ջերմություն 8-12°: Տաք որերին, յերբ գոմը միշտ բաց է, շատ լավ ողափոխվում է: Թերևս գոմի լավ ողափոխությունը կովերի բացակայության ժամանակ, նպաստում է հորթերին հիվանդացնող բացիլների բշնալուն, ուստի և հորթերը քիչ են տանջվում: Համենայն դեպս, հորթերի հիվանդանալու պատճառներ այնքան կարևոր են, վոր արժե դրա համար լուրջ կերպով աշխատել:

1912 թվի աշնանը այցելեցի արտասահմանյան շատ տնտեսություններ Գերմանիայում, Շվեյցարիայում, Բելգիայում, և Դանիայում: Ինչ հաջողվեց հավաքել բավականին շատ նյութեր հորթերի անուցման վերաբերյալ:

Նախապես պատմելով խնամքի ձևերը արտասահմանյան աչքի ընկնող տնտեսություններում, հետագայում յետ կաշխատեմ նկարագրել Պետրովսկի գյուղատնտեսական ակադեմիայի ֆերմայի հորթերին կաթ տալու ձևը:

ՀՈՐԹԵՐԻ ԿԵՐԸ ՅԵՎ ԽՆԱՄՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄՔԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Ինձ հանձնարարեցին զիտել մի քանի կալվածքներ, ի թիվս վորոնց նաև Լոխովի կալվածքը, վորը առաջացրել և ազնվացրել է հայտնի պետկուսկային հաճարը: Կալվածքը գտնվում է Բերլինից վոչ հեռու:

Լոխովի կալվածքը հետաքրքրական է ցեղաբույժի (սերմաբույժի) համար, վորն այնտեղ կարող է ձեռք բերել շատ գործնական ցուցմունքներ:

Բերլինում ինձ ի միջի այլոց հայտնել եյին, վոր Լոխովի մոտ անաանաբուծությունն ել որինակելի է, այնուամենայնիվ, ծանոթանալով այդ կալվածքի տնտեսության հետ, նկատեցի յերկրագործության գերազանցությունը անաանաբուծության նկատմամբ:

Այստեղի անասունը խոշոր է և չալպատւրիկ: Լոխովի հորթերի խնամքի մասին իմացա հետեյալը:

Հորթերին կովերի տակ չեն խնամում: Մինչև չորս շաբթական հասակը հորթերն ստանում են անքաշ կաթ՝ որեկան 9—10 լիտր^{*}): Չորս շաբթական հասակից հետո, անքաշ կաթը աստիճանաբար փոխարինում են յերեսը քաշած կաթով, վորով կերակրում են մինչև յոթնամսյա հասակը:

Չորսշաբթական հասակից հետո, հորթուկին սկսում են ընտելացնել ընդհանուր կերին: Լոխովի հետ ունեցած խոտակցությունից յես իմացա, վոր նրա մոտ հորթերին ավելի քիչ են կաթ տալիս և կաթով անելու տևողությունն

^{*}) Մեկ գույլը պարունակում է 12½ լիտր:

եւ ավելի կարճ ե, քան թե գերմանական բազմաթիվ տընտեսություններում: «Գերմանիայում հորթերին սովորաբար շատ կաթ են տալիս և կաթով եւ կերակրում են մինչև մի տարեկան հասակը»:

Բոննի գյուղատնտեսական ակադեմիային ե պատկանում Դիկոսզոֆ կալվածքը: Ուսանողներին ծանոթացնելու համար, այստեղ պահում են կովերի զանազան ցեղեր:

Հորթերին կերակրելու մասին մեր հարցուփորձի ժամանակ այն տպավորությունն ստացա, վոր դրանով այդտեղ շատ քիչ են հետաքրքրվում, ուստի ինձ չհաջողվեց մի վորոշ տեղեկություն ստանալ, քանի վոր թե կառավարիչը և թե ողնականը բացակայում էյին կալվածքից: Բացատրությունները տալիս եր ստորին ծառայողներից մեկը: Ընդհանրապես յես իմացա հետևյալը.—հորթերին կովերի տակ չեն խնամում և սկզբում նրանց կերակրում են անքաշ կաթի մեծ բաժիններով: 6—8 ամսական հասակից կաթ տալը պակասեցնում են, ավելացնելով ընդհանուր կերի քանակը, վորը սկսվում ե յերկամսական հասակից, այնե՝ մեկ ֆունտ վուշի քուսպ և մեկ ֆունտ ծեծած վարսակ: Յերեք ամսական հասակից ավելացնում են մեկական ֆունտ քուսպ և վարսակ: Հետագայում, վոչ շուտ, ընդհանուր կերի քանակն ելի յեն ավելացնում: Խոտ տրվում ե այնքան, վորքան հորթին հաճելի յե: Հորթուկը յերբ կաթից կտրվում ե և խոտն ել լավ ե ուտում, որեկան նրան տալիս են $1\frac{1}{2}$ — $1\frac{1}{4}$ կիլոգրամ^{*)} վուշի քուսպ և $1\frac{1}{2}$ կիլոգրամ^{*)} ծեծած վարսակ:

Հոհենհայմի գյուղատնտեսական ակադեմիայի կալվածքը կովերը սիմամենտալ ցեղից են: Ծնվելուն պես՝ հորթերին բաժանում են կովերից և ամեն մի հորթուկ ստանում ե իր մոր կաթից որական 4 լիտր, մինչև մի շաբթական հասակը, վորից հետո տալիս են ընդհանուր կաթից որեկան 5 լիտր: Մի շաբաթից հետո, տրվելիք կաթի

^{*)} Մեկ կիլոգրամը = ուսական $2\frac{1}{2}$ ֆունտին:

քանակը ավելացնում են դարձյալ 1 լիտրով, աստիճանաբար բարձրացնելով մինչև որեկան 11 լիտրի։ Ութերորդ կամ յոթերորդ շաբաթում հորթուկը ստանում է 11 լիտր կաթ, իսկ դրանից հետո, կաթը շաբաթական սկսում են 1-ական լիտրով պակասեցնել՝ մինչև $4\frac{1}{2}$ —5 ամիսը, յերբ նա բուրրովին կտրվում է կաթից։ Կաթի պակասեցրած քանակի փոխարեն տալիս են ջուր, վորի ջերմության աստիճանը 10 — 12° է լինում։ Զուրը տրվում է առանձին և այնքան, վոր ջրի ու կաթի ընդհանուր քանակը լինի անփոփոխ, այն է՝ որեկան 11 լիտր։ Զուրը տրվում է կաթից 2—3 ժամ հետո։ Մինչև 13 շաբաթական հասակը հորթերին խմեցնում են որեկան 3 անգամ, իսկ հետո՝ 2 անգամ։ Կաթի քչացնելու ժամանակ, ծեծած վարսակն ու վուշի քուսպը սկսում են ավելացնել, վորոնց տալը սկսվում է 4—5 շաբաթական հասակից։ Հորթուկն սկզբում որեկան ստանում է մի ֆունտ խառնուրդ (ծեծած վարսակ և վուշի քուսպ) և ապա ընդհանուր կերի քանակն ավելացվում է մինչև մեկ կիլոգրամմ։ Հորթուկը յերբ կաթից կտրվում է, այն ժամանակ ավելացվում է ընդհանուր կերի քանակը և են ել այնքան, վոր հորթը կարողանա մաքուր, առանց մնացորդի ուտել։ Խոտ տրվում է վորքան հորթը ցանկանա։

Յերինջները մինչև կիսամյա հասակը կաթ են խմում, վորի ամենաշատ քանակը նույնն է մնում—որեկան 11 լիտր։ Ինձ հայտնել են, վոր մասնավոր տնտեսություններում հորթերին կաթ ավելի շատ են տալիս և կաթից կտրում են միմիայն ծննդից հետո՝ 10—12-րդ ամսում։

ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄՔԸ ՇՎԵՅՑԱՐԻԱՅՈՒՄ

Առանձնապես ինձ հետաքրքրում էր Շվեյցարիան, վորովհետև Պետրովսկ. գյուղատնտեսական Ակադեմիայի ֆերմայում պահվում են շվեյցարական անասուններ։

Գալով Շվեյցարիա, յես կանգ առա Ցյուրիխում, վո-

բին մոտ կա միջին գյուղատնտեսական դալրոց. վերջինս
ունի իր կալվածքում և անասունների բաժանմունք, փոր-
տեղ պահվում են յեղջյուրավոր կենդանիների յերկու ցեղ
— Շվիցական և Սիմմենտալի կովեր: Յեւ մեկը և՛ մյուսը
լավ տալավորություն են թողնում: Ծնվելուց հետո հորթե-
րին բաժանում են կովերից և խնամում առանձին, փորի
ժամանակ կերակրում են միմիայն անարատ կաթով: Հոր-
թերին կաթ տալը կատարվում է հետեյալ կերպով.

Հորթուկին առաջին օրը տալիս են $1-1\frac{1}{2}$ լիտր դալ
(МОЛОЗНО).

Յերկրորդ օրը	2	լիտր
Յերրորդ »	$2\frac{1}{2}$	»
Չորրորդ »	3	»

Հետագա օրերին կաթի քանակը շարունակ ավելաց-
նում են մինչև յերկու շաբթական հասակը, յերբ հոր-
թուկը սկսում է ստանալ որական 8 լիտր կաթ:

Յերկու շաբաթն անց, հորթուկին տալիս են մի քիչ
խմիչ և ավելացնում են կաթը՝ որական դարձյալ մեկ լիտր:

Յերրորդ շաբաթից, բացի վերոհիշյալից սկսում են տալ
ծեծած վարսակ. և հենց փոր հորթուկը վարժվում է, որա-
կան տալիս են կես կիլոգրամմ, փորը շարունակվում է
մինչև յերկու ամսական հասակը: Յերկրորդ ամսից սկսած
կաթի քանակը աստիճանաբար պակասեցնում են. դա տե-
վում է մինչև վեց ամսական հասակը: Կաթ պակասեցնե-
լով ավելացնում են վարսակի քանակը. բացի այդ՝ տալիս
են փուշի ծեծած սերմ (սկզբում $\frac{1}{4}$ կիլոգրամմ): Կաթի
հետ ջուր չեն խառնում. առաջ կաթն են տալիս, 2—3
ժամ անց՝ ջուրը: Ջրի քանակը խիստ փորոշվում է և ավե-
լացվում այնքան՝ փորքան պակասեցրել են կաթը, այն-
պես փոր կաթի և ջրի ընդհանուր քանակը մնում է նույնը:
Որինակ՝ յեթե հորթուկը օրեկան ստանում էր 9 լիտր
կաթ, կաթի պակասացնելու, ինչպես և ջրի ավելացնելու

դեպքում, այդ յերկու հեղուկների ընդհանուր կշիռը պիտի համասարվի 9 լիտրին:

Վեց ամսական հասակից հորթուկին տալիս են այնքան խոտ, վորքան նա կարող է ուտել: Բացի խոտից տալիս են նաև $1/2 - 1$ կիլոգրամ մ վարսակ, իսկ վուշի քուսպ տալը դադարեցնում են: Նման կեր հորթը ստանում է մինչև միամյա հասակը, վորից հետո նրան քշում են սարերը արոտի, դեպի Յուրան, վորտեղ արածում է մայիսի սկզբից մինչև հոկտեմբերի վերջը:

Ձմեռվա խնամքի ժամանակ հորթերն ստանում են ցանկացածի չափ խոտ, 1-ական կիլոգրամ մ ճակնդեղ և կեսական կիլոգրամ մ ծեծած հացահատիկ — կարմրացորեն, ցորեն վարսակ, գարի և այլն, նայելով թե վորից կա տնտեսության մեջ:

Յերինջ-հորթերը խնամվում են այնպես, ինչպես հորթուկները, միայն սրանք որեկան ավելի շատ կաթն են ստանում, վորը շարունակվում է ավելի յերկար ժամանակ: Որեկան ամենաշատ կաթի քանակը հասնում է 12—15 լիտրի, այն ել 9—12 ամիս: Չորս ամսական հասակից ըսկսում են որեկան կաթի քանակը պակասեցնել, թեև շատ դանդաղ: Կաթը պակասեցնելուն պես՝ հորթուկին սկսում են կերակրել ծեծած վարսակով: Յերք վարսակ ուտելուն վարժվում է, հորթուկին տալիս են ավելի շատ միայն՝ ծեծած, ջարդած դրությամբ:

Ցուցահանդեսի համար պահվող հորթերին, բացի վարսակից, տալիս են նաև վուշի ծեծած սերմ: Ընդհանրապես, ինչպես ինձ են հայտնել կեր չեն խնայում:


Բերնի մոտ գտնվող Ռյուստի գյուղատնտեսական դպրոցի կալվածքը: Պահվում են սիմմենտալ ցեղից անասուններ: Ինչպես հարցուփորձերից պարզվեց, հորթերը խնամվում են այդ դպրոցի նախկին տեսուչ Մոգերի մշակած նորմաներով:

Հորթուկը խնամվում է կովից բաժան. ստանում է

սկզբում դալ (մոր առաջին կաթը), հետո յեւ սեփական
մոր կաթը: Կաթ տալը կատարվում է հետեւյալ նորմայով.—

1-ին շաբ. վերջին՝ հորթ. ստանում է որեկան						5—6	լիտր կաթ	
2-րդ	»	»	»	»	»	7	»	»
3-րդ	»	»	»	»	»	7 ³ / ₄	»	»
4-րդ	»	»	»	»	»	8,5	»	»
5-րդ	»	»	»	»	»	9	»	»
6-րդ	»	»	»	»	»	9	»	»
7-րդ	»	»	»	»	»	9	»	»
8-րդ	»	»	»	»	»	9	»	»
9-րդ	»	»	»	»	»	9	»	»
10-րդ	»	»	»	»	»	8,5	»	»
11-րդ	»	»	»	»	»	8	»	»
12-րդ	»	»	»	»	»	7,5	»	»
13-րդ	»	»	»	»	»	7	»	»
14-րդ	»	»	»	»	»	6	»	»
15-րդ	»	»	»	»	»	5	»	»
16-րդ	»	»	»	»	»	4	»	»
17-րդ	»	»	»	»	»	3	»	»
18-րդ	»	»	»	»	»	3	»	»
19-րդ	»	»	»	»	»	2,5	»	»
20-րդ	»	»	»	»	»	2	»	»
21-րդ	»	»	»	»	»	2	»	»
22-րդ	»	»	»	»	»	1	»	»
23-րդ	»	»	»	»	»	1	»	»
24-րդ	»	»	»	»	»	—	»	»

Ստա՝ վորքան ցանկանա.



Ստա

Ծեծած վարսակ և
ուրիշ հացահատիկներ
(կիւղորամներով)

Վաշի քուսպ
(կիւղորամներով)

Հորթուկները կաթ ստանում են մինչև 20-25 շաբ-
թական հասակը, իսկ ցեղընտիր յերինջները մինչև 25—30

շաբաթկան դառնալը: Մոզերի կարծիքով կանոնավոր կերի ժամանակ անհրաժեշտ է, վոր ցեղընտիր մոզին խմի 800—1000¹⁾ լիտր կաթ, իսկ ցեղ. յերինջը՝ 1200—1400²⁾ լիտր և ավելի հորթերի կաթից կտրելը պիտի տեղի ունենա աստիճանաբար և դանդաղորեն: Հանկարծակի փոփոխությունը կեր տալու ժամանակ՝ անթույլատրելի յէ: Կանաչով կերակրելիս հորթերին կաթից կտրելի յէ կտրել և հեշտ է, և՛ արագ:

Մինչև մի տարեկան հասակը հորթուկին կտրելի յէ տալ ուժեղ կեր (յեմ): Ամառը կտրելի յէ հանձնարարել $\frac{1}{2}$ —1 կիլոգրամ մ ծեծած վարսակի և հացահատիկի թեփ, իսկ ձմեռը՝ $\frac{1}{2}$ —1 կիլոգրամ մ ծեծած վարսակի և վուշի քուսպի խառնուրդ: Ծծկեր հորթուկը յերբ կաթ չի ստանում, նրան տանում են դարունքից մինչև աշունք արոտի:

Յես դիտմամբ այցելեցի շվեյցարական այս յերկու գյուղատնտեսական դպրոցները, վորովհետև դրանք տեղում որինակելի յեն համարվում: Հարցուփորձերից պարզվեց, վոր ուրիշ դպրոցներ ևս, վորոնք իրենց կալվածքներում ցեղընտիր կովեր ունեն, հորթերին կաթ տալու ժամանակ վերևում բերված նորմաներն են պահպանում:

Բացի գյուղատնտեսական դպրոցներից, ինձ հետաքրքրում էյին նաև շվեյցարական մասնավոր տնտեսություններում գործադրվող հորթերին կերակրելու ձևերը: Մասնացույց արին ինձ յերկու մասնավոր տնտեսություններ, վորտեղ պահվում էյին որինակելի շվիցական անասուններ: Դրանք Արտում՝ (Շվիցի կանտոն) Բրյուզի-Գրետենների և Մագիի կալվածքներն էյին, վոչ հեռու վինտերտուրից (Ցյուրիխի կանտոն): Սկզբում յես դիտեցի Բրյուզի-Գրետենների կալվածքը, վորը Շվեյցարիայում շվիցական ցեղի անասունների խոշոր առևտրական է, ունի

¹⁾ 64—80 դույլ:

²⁾ 96—112 դույլ:

հասե շվիցական ցեղից մեծ հախիր, և հռչակված և վոչ միայն Շվեյցարիայում, այլ և ոտար պետութիւններում:

Առանձին ուշադրութեամբ յես հարց ու փորձ արի Բրյուզի-Գրետեներին, թե՛ հա ի՞նչպես և խնամում յուր հորթերին: Ինձ հաջողվեց իմանալ հետևյալը. —

Հորթերին կովերի տակ չեն մեծացնում:

Բնական պայմաններում ծնելուց 3—5 ժամ հետո, կովին կթում են, յերբ հա «հալարվում» է. դալը (առաջին կաթը) հորթուկին են խմեցնում և այն ել այնքան, վորքան հորթուկը կը կարողանա խմել: Սա կատարվում է հորթուկին սկզբնական կղկղանքից ազատելու նպատակով: Յերկրորդ և յերրորդ որերը դալից տալիս են մի քանի անգամ՝ մեկական լիտր:

Զորրորդ և հինգերորդ որերը 2 կամ 3 անգամ կաթ են տալիս, վորի քանակը աստիճանաբար ավելացնելով 14-րդ որը հասնում է արդեն 6—7 լիտրի: Յերկշաբաթական հասակից կաթ տալը դարձյալ ավելացնելով, հասցնում են մինչև որեկան 8—9 լիտրի, վորը շարունակվում է մինչև չորս ամսյա հասակը: Այդ ժամանակից տրվելիք կաթի քանակը սկսում են պակասեցնել, այն ել շատ դանդաղ, մինչև վեց ամսյա հասակը, վորից հետո հորթին կաթից զտրում են և փոխարենը ջուր տալիս, և են ել առանձին:

Հորթուկին խոտով սկսում են կերակրել յերեքշաբթական հասակից. պակասեցնելով կաթի քանակը, սկսում են կերակրել ծեծած վարսակի և թեփի չոր խառնուրդով, տալով $\frac{2}{3}$ -ը վարսակ, $\frac{1}{3}$ -ը՝ թեփ:

Վորպեսզի հորթուկը առաջին որերին վոչ խոտ ուտի և վոչ ել վոտքի տակի ծղոտը, յերախակալ (դնչակալ) են հազցնում և այսպես պահում մինչև յերեքշաբթական հասակը, վորից հետո յերեխակալը հանում են տալով հորթուկին լավ խոտ: Կաթ տալը պակասեցնելով, վարսակի և թեփի կերն են ավելացնում: Անասունների

տիրոջ հետ ունեցած խոսակցութիւնից և սեփական դիտողութիւններէից յետ յեկա այն յեղրակացութեան, վոր այդ կալվածքում հորթերի խնամքի համար կեր չեն խնայում, բավական ե հիշել, վոր այդտեղից կաթ չեն ծախում և ստացվածն ել ծախսում, խմեցնում են իրենց տնտեսութեան սեփական հորթերին:

Կեմպտալ կայարանի մօտ, Մադգի կալվածքում հորթերը խնամվում են նույնպէս կովերից ջուկ: Հորթուկները կաթ ստանում են մինչև կիսամյա հասակը. մինչև յերկու շաբթական հասակը կաթ տրվում ե որեկան յերկու անգամ 6—7 լիտր, վորից հետո կաթի քանակը ավելանում և հասնում ե մինչև 8 լիտրի, յերբ հորթուկը 2—4 ամսական ե: Դրանից հետո կաթի քանակը աստիճանաբար պակասում ե և վեց ամսական հասակում՝ կտրվում: Խոտ տրվում ե հորթուկին 2—3 շաբթական հասակից, տասերորդ շաբթում հորթուկին տալիս են ջարդած վարսակի խզուռ $\frac{3}{4}$ —1 կիլոգրամմ: 6—8 ամսական հասակում հորթուկին տալիս են խոտ, վորքան ցանկանա, և $\frac{1}{2}$ —1 կիլոգրամմ վարսակ: Ութ ամսական հասակից նա ստանում ե միմիայն խոտ և այդպէս մինչև առաջին ծինը:

Յերինջ-հորթերը մինչև ութամսյա հասակը կաթ են ստանում. կաթ տալու ամենամեծ քանակը հասնում ե որական 9 լիտրի, վորը յերինջը ստանում ե մինչ 2—5 ամսական հասակը: Հինգամսյա հասակից կաթ տալը աստիճանաբար պակասեցվում ե և այդ հասակում արդեն տրվում ե մեկ կիլոգրամմ ջարդած վարսակ: Կաթի աստիճանական քչացումը շարունակվում ե մինչև ութամսյա հասակը, վորից հետո յերինջին կաթից կտրում են և բուկում են տալ յերկու կիլոգրամմ ծեծած վարսակ և վորքան ցանկա՝ լավ խոտ: Հետագայում վարսակի քանակը որեկան դարձնվում ե մինչև 3—4 կիլոգրամմ:

Բացի այս յերկու խոշոր տնտեսութիւններից, յետ Շվեյցարիայում այցելեցի ուրիշ գյուղական շատ տնտե-

սություններ, վորտեղ պահվում էյին շվիցական ցեղի անասուններ: Դիտելիս ինձ զարմացնում էր իմ տեսած բոլոր անասնանոցների կեղտոտ լինելը: Առանձին հորթանոց անասնանոցները՝ չունեյին, ծնվելուց հետո հորթուկին մօրից առանձնացնում են և կապում, տակն ել շատ քիչ ծղոտ գցում: Շատ էյի ցանկանում իմանալ հորթերի մահացության տոկոսը գյուղական տնտեսություններում, բայց ճիշտ տեղեկություն ստանալն անհնարին յեղավ: Գյուղական տնտեսություններում հորթերին տրվելիք կաթի քանակի մասին հետևյալը կարելի չե ասել.— խմեցնում են այնպես, ինչպես գյուղատնտեսական՝ վերը նկարագրած դպրոցներումն են անում, այն տարբերությամբ միայն, վոր այստեղ կաթ շատ և տրվում, վորով հորթերը անվում են մինչև միամյս հասակը: Ծախու ցեղընտիր հորթերին կաթ անշափ շատ և տրվում և այն ել մոտավորապես 13—14 ամիս՝ նման հորթերին չեն խնայում և ընդհանուր կերից տալը:

Տեսել եմ, թե ինչպես գյուղական տնտեսություններում կովին կթելուց հետո, ամբողջ կաթը առանց կշռելու, տալիս են հորթին: Հորթերին դիտելիս, ինձ զարմացնում էր թե նրանց տեսքը և թե խոշոր հասակը, բայց հետո, մոտիկից ծանոթանալով նրանց կաթ տալու հետ, յես յեկա այն յեզրակացություն, վոր ուրիշ կեղպ ել չեր կարող լինել, այդքան առատ կաթ և ընդհանուր կեր տալու դեպքում: Ակներե և, վոր առատ և յերկար կաթ տալը նպաստում են հասակի խոշորությանը:

Սիմենտալ ցեղի հորթերին կաթ տալու հետ յես առիթ եմ ունեցել ծանոթանալու վերը նկարագրած գյուղատնտեսական դպրոցներում: Այդ դպրոցի ուսուցիչներն ինձ ասում էյին, վոր սիմենտալ անասուն ունեցող գյուղացիները հորթերին կաթ են տալիս այնպես, ինչպես ընդունված և դպրոցներում, այն տարբերությամբ միայն, վոր հորթերն այնտեղ կաթը ստանում են ավելի շատ քանակությամբ և յերկար ժամանակ:

ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄՔԸ ԲԵԼԳԻԱՅՈՒՄ


Շվեյցարիայից մեկնեցի Բելգիա: Ինձ հաջողվեց հորթերին կաթ տալու մասին տեղեկություններ ստանալ ժամրվյուլի պետական գյուղատնտեսական հայտնի ֆերմայում:

Հորթուկն այստեղ ծնվելուն պես բաժանվում է կովից և առաջին որերը ստանում է դալ (МОЛОЗНВО), իսկ հետո՝ կաթ: Կաթի քանակը աստիճանաբար ավելացրվում է, մինչև վոր որեկան հասնում է 12 լիտրի, վորը հորթուկը ստանում է մինչև յերկամսյա հասակը, ըստ վորում, նրան տրվում է որեկան յերեք անգամ, չորսական լիտր:

Յերեք ամսից հետո անարատ կաթ տալը աստիճանաբար պակասեցվում է, և փոխարենը սկսում են տալ քաշած կաթ, վորի ամենաբարձր քանակությունը որեկան հասնում է 10—15 լիտրի: Անարատ կաթի պակասեցումով հորթուկին քիչ-քիչ սկսում են տալ ընդհանուր կերից:

Բոլոր հորթերը 18-ամսյա հասակից սկսած ձմեռը ստանում են 20 կիլոգրամ մ հետեյալ խառնուրդներից պատրաստած ապուր. — $\frac{1}{2}$ կիլոգրամ մ ծեծած յեգիպտացորեն, $\frac{1}{2}$ կիլոգրամ մ քունջութի քուսպ, $\frac{1}{4}$ կիլոգրամ մ թեփ, $\frac{1}{4}$ կիլոգրամ մ բուսախաշի (թթխմորի) ծագում ունեցող մնացորդներ, 5 կիլոգրամ մ ճակնդեղ և 2—3 կիլոգրամ մ դարման: Այս բոլորից հետո հորթերը տարվում են արոտ և այլևս ուրիշ կեր չեն ստանում: Հորթերն արածում են և՛ ցերեկը, և՛ գիշերը:

Ծախելու համար մաքուր հորթերին խմեցնում են անարատ կաթ և նրանց պահում են ըղրորովին մուծ շինության մեջ, վորպեսզի ստացվի ազնիվ հատկության սպիտակ միս: Մսագործները այդպես պահած հորթերին լավ գին են տալիս: Մթության մեջ պահելու սովորության մասին յես իմացա միայն Բելգիայում: Արժեք մեզ մոտ



ևս մասացու հորթերին մութ շինութեան մեջ կաթ տալ՝ առանձնապէս այն տեղերում, ուր կաթ տալը մեծ մասշտաբով և դժուարութեամբ,

ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄՔԸ ԴԱՆԻԱՅՈՒՄ

Բելգիայից հետո յետ այցելեցի Դանիան:

Կանդ տոնելով Ողենգայում, հետեյալ որը յետ գնացի այդ քաղաքին մոտ դանվոդ գյուղատնտեսական դպրոցը:

Այդ դպրոցի («Dalum Lædbrugs-skole») դասատու Նիլսենից յետ իմացայ հորթերին կաթ տալու մասին հետեյալը. —

Ծնվելուց հետո հորթերին կամ իսկույն քաժանում են կովերից կամ նրանց տակ պահում են յերեք որ (Նելսենը վերջինիս կողմնակիցն է): Յեթե հորթուկը մորից չի ծծում, այդ դեպքում առաջին 3—5 որը ստանում է 3—4 անգամ մեկական լիտր կաթ: Զորս որից հետո հորթուկին որեկան տալիս են $4\frac{1}{2}$ լիտր կաթ, վորը շարունակվում է 10 որ. դրանից հետո կաթը ավելացվում է որեկան մինչև 6—7 լիտր, վորը շարունակվում է 20 որ: Բնանորյա հասակից հորթուկին անարատ կաթի փոխարեն, աստիճանաբար սկսում են տալ քաշած կաթ, վորի ժամանակ անարատը խառնում են քաշած կաթի հետ: Անարատ կաթի քանակը քանի դնում պակասում է, իսկ քաշած կաթինը՝ ավելանում, այնպէս վոր 30—40-րդ որը հորթը ստանում է բոլորովին քաշած կաթ: Քաշած կաթի ամենաբարձր քանակը որեկան հասնում է մինչև 10 լիտրի:

Կաթի քանակը պակասեցնելով, հորթին անմիջապէս սկսում են քիչ-քիչ տալ ջարդած վարսակ, լավ մանրած (աղացած) վուշի քուսպ և խոտ: Յերեք ամսական հասակից հորթին սկսում են տալ չկտրտված ճակընդեղ:

Յերբ որեկան կաթի քանակը հասնում է 10 լիտրի, սկսում են կաթի քանակը պակասացնել, վերջինս

փոխարինելով վարսակով և քուսպով: Կաթի քանակը պահասացնելը կատարվում է աստիճանաբար, այնպես վոր վեցամսյա հասակում կաթից բոլորովին կտրում են:

Այս գյուղատնտեսական դպրոցից հետո յես այցելեցի հաս Պանխայի Լյադելունդի գյուղատնտեսական դպրոցը և բացի դրանից բազմաթիվ մասնավոր տնտեսություններ:

Յերբ հարց ու փորձ արի հորթերին կաթ տալու մասին, պարզվեց, վոր այնտեղ ել գործը տարվում է մոտավորապես այնպես, ինչպես Դալումի (Dalum) գյուղատնտեսական դպրոցում:

Պանխայի անասնանոցները դիտելիս յես այն տպավորությունն ստացա, վոր տերերը կաթնատու կովերին ավելի լավ են կերակրում և ավելի ուշադիր խնամում քան դեռահասներին:

Շատ հաճախ տեսնում եյի հորթերին չոր հատակի վրա կանգնած, և յեթե վոտների տակ ծղոտ եր լինում, այն ել չափազանց քիչ քանակությամբ: Ընդհակառակը, նրանց կողքին կանգնած կաթնատու կովերը հոգատարությամբ մաքրված եյին և վոտների տակ ել բավականին ծղոտ ունեյին:

ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄՔԸ ՊԵՏՐՈՎՍԿ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՖԵՐՄԱՅՈՒՄ

Հորթերին կաթ տալու մասին խոսելուց առաջ պետք է մի քանի խոսք ասել հղի կովի խնամատարության և կերակրելու մասին:

Այս գեպքում կովերին աչքաթող են անում ծննդից 8 շաբաթ առաջ, վորի ժամանակ շվիցական ցեղի շատ կովերի (ուռսականը շատ հազվադեպ) ստիպված արհեստականորեն են աչքաթող անում և արդեն 9—10 շաբաթ ծննդից առաջ պակասեցնում են կերի քանակը, կթելով որական յերեք անգամվա փոխարեն՝ յերկու անգամ (առա-

վտայան ժամը 4-ին և յերեկոյան 7-ին): Արհեստականորեն աչքաթող արվող կովերին ուժեղ «յեմ» և խլուկներ (արմատապտուղ, корнеплод) տալը աստիճանաբար պահասեցվում է, տալով որեկան յերկու անգամ խոտ և մեկ անգամ վարսակի ծղոտ՝ ընդամենը 18 — 20 ֆուտ խոտ ու ծղոտ՝ յուրաքանչյուր գլուխ անասունին:

Յերբ կովը կաթից կարվում է և ծիծնել դատարկվում, այն ժամանակ մի շաբաթից հետո նման ծննդկան կովին սկսում են ուժեղ կեր, «յեմ» տալ:

Այժմ ընդունված որեկան կերակրի քանակն է՝ 10 — 12 ֆունտ խոտ, 4 — 6 ֆունտ վարսակի ծղոտ կամ դարման և 3 — 4 ֆունտ քուսպ: Ծննդից 3 — 4 ուր հետո կովն ըստանում է նախկին կերը, վորից հետո որեցոր ուժեղ կերի և խլուկների տալը ավելացվում և հասցնվում այն նորմային, յերբ կովն առանց լղարելու ամենաշատ կաթն է տալիս: Անհրաժեշտ է ամենալուրջ ուշադրություն դարձնել կերը շատացնելու վրա, վորովհետև յեղել են դեպքեր, յերբ կերի հանկարծակի փոփոխությունը հիվանդացրել է կովին ու կաթից ել կտրել: Լինում են առատ կաթ տվող կովեր, վորոնց ծննդից հետո միանգամից մեծ քանակությամբ խլուկներով և ուժեղ կերով սնելով, ծծերն ուռչում են, հետո յել բորբոքվում: Նման կովերին ստիպված յերկար բժշկում են, բայց հետագայում նրանք ել շատ կաթ չեն տալիս: Նույն բանը նկատվում է նաև առաջնածին կովերի մեջ, ուստի վերջիններիս ծննդյան առաջին որերին անհրաժեշտ է մշտական ուշադիր խնամք:

Բոլոր կովերը ամառը արածում են դուրսը, առավոտյան՝ ժամը 6 — 10 $\frac{1}{2}$ -ը և հետո՝ կեսօրվա ժամը 2-ից մինչև յերեկոյան 5 $\frac{1}{2}$ -ը: Ծննդից մոտավորապես մի շաբաթ առաջ ծննդկան կովերին այլևս արոտ չեն ուղարկում, այլ թողնում են գոմում կամ արածեցնում են հորթերի հետ միասին՝ առանձին արոտատեղում:

Առատակաթ և առաջածին կովերին, ծնելուց հետո

1—1¹/₂ շաբաթ պետք է պահել տանը և կերակրել խոտով, վորից հետո պետք է ավելացնել թարմ խոտը և ընդհանուր կերը. յեթե այդ ժամանակ նորածինը ծծերի բորբոքում չունի, կարելի յե քշել արտա:

Կովերին պամում պահելու շրջանում, վորը տեղի յե ունենում սեպտեմբերի վերջերից կամ հոկտեմբերի սկզբներից մինչև մայիսի 7—14-ը, բոլորին ել քշում են զբոսանքի: Նման զբոսանքներ կատարելը ընդհանրապես հանձնարարելի յեն, վորովհետև, ջարենապատ ազդեցություն է ունենում անասունների առողջության և ապագա հորթուկի վրա: Սկզբում կովերին դուրս եյին բերում մի առանձին բացողյա տեղ, բայց յերևաց, վոր այդ բանը շատ քիչ է ոգուտ բերում, վորովհետև, կովերը մի տեղ կանգնելով սառչում եյին և կաթը պահասեցնում: Մի քանի շաբաթից հետո համոզվելով նման զբոսանքների անոգտակարության մեջ, վորոշվեց նախիրը քշել անտառ, վորը գտնվում եր մի վերատ հեռավորության վրա:

Դանդաղորեն կովերը զնում են անտառ, վորտեղ հըսկողության տակ մնում են մի ժամ և ազա վերադառնում տուն: Նման ձևի զբոսանքի ժամանակ կովերը վոչ միայն շարժման մեջ են լինում, այլ և դա այն առավելությունն ունի, վոր անտառի մեջ նրանք խիստ քամիներից ազատվում են:

Յերբ սառնամանիքը 12⁰-ից ավելի յե, անձրև կամ ձյուն է գալիս և խիստ քամի յե լինում, կովերին բոլորովին դուրս չեն բերում: Կովերին դուրս բերելուց զըրկում են ծննդից 7—10 որ առաջ: Այդ կովերին թողնում են գոմի բակում, իսկ հետո յել տեղափոխում մի առանձին շենք, վոր ցանկապատով բաժանված է ընդհանուր գոմից և կոչվում է «Ծննդարան»:

Անասնաճնոցում ծնունդների համար նման շենքեր ունենալը անհրաժեշտ է հետևյալ նկատառումներով. — հորթարերությունները հաճախ տեղի յեն ունենում փեյինը մաք-

րելիս, խոտ բաժանելիս և այլն: Այդ ժամանակ, մանա-
վանդ ձմեռվա ցրտերին, միջանց քամի յե (СВОВЗНЯК)
լինում, փորից կարող են մրսել վոչ միայն հորթարերու-
թյանը հետևող մարդիկ, այլ և կովն ու հորթուկը:

Նման նկատառումներով անասնանոցում ներկայումս
յերկու դոմ բոլորովին առանձնացրած ե, փորոնց մուտքը
անասնանոցի բակի ներսի կողմից ե: Այդ «ծննդարանում»
ազատվում են բոլոր կովերը, փորտեղից նրանց դուրս են
բերում ծննդից 4—7 որ հետո և փոխարենը բերվում են
այն կովերը, փորոնք առաջին հերթին պիտի ծնեն: Արժե
նկատել, փոր խնամքը հեշտացնելու տեսակետից ծննդա-
բերությանը մոտ՝ բոլոր կովերին լավ կը լինի իրար կողքի
պահել. այդ կանոնը գործադրվում ե այժմ Պետրովսկ-
գյուղատնտեսական ակադեմիայի ֆերմայում:

Կերի չափավոր տալը և զբոսանքները (բացի առող-
ջության վրա բարերար ազդեցությունից) այն նպատակով
են գործադրվում, փորպեսզի խոշոր հորթուկներ չծնվեն,
փորոնց կովերը շատ դժվարությամբ են բերում: Վերջին
ժամանակներս համեմատաբար մեծ հորթեր չեն ծնվում, ուս-
տի և կովերը ծնում են առանց կողմնակի ոգնության:

Հենց փոր հորթուկը լույս աշխարհ ե գալիս, ձեռքով
խսկույն և յետնրա բերանի լորձունքը սրբում են: Պետրովսկ-
գյուղատնտեսական Ակադեմիայի ֆերմայում նկատվել ե,
փոր յերբ լորձունքը չեն սրբում, հորթերը հիվանդանում
են թոքերի բորբոքումով, (հավանականորեն լորձունքի
թոքերն ընկնելուց): Լորձունքի սրբելուց հետո, հոր-
թուկին զգուշությամբ մոտեցնում են մորը, փորպեսզի
նա մաքուր լիզի, փորի ժամանակ պիտի հետևել, փոր կովը
լեզվով պորտը չբռնի և չձգի. դրանից հորթերը գրիժա յեն
ստանում, ուստի անհրաժեշտ ե, փոր այդ ժամանակ կովի մոտ
վստահելի մարդկանցից մեկը լինի: Յեթե կովը հորթուկին
չի լիզում—փորը, ի միջի այլոց, շատ հազվադեպ ե—այն
ժամանակ վերջինիս չորացնում են մաքուր և չոր ծղոտով:

Հորթուկը լիզվելուց կամ սրբվելուց հետո պատգարակով տարվում է հորթանոցը, փորտեղ կշռում են տասնորդական կշեռքով: Հորթերին տեղավորում են առանձին ախոռներում, փորոնց չափը լինում է.— լայնությունը՝ 2 արշին 8 վերշուկ, յերկարությունը՝ 2 արշ. 10 վերշ. և բարձրությունը՝ 1 արշ. 14 վերշ.: Ախոռիկները վերոհիշյալ չափից ցածր չլինել չարժե, փորովհետև հորթիկները ցանկապատի գլխովը թռչելիս կարող են իրենց փոքր կոտրել: Մսուրները լավ է շարժական լինեն և հորթուկի կյանքի առաջին որերին հանվեն: Այդ ժամանակ հորթուկն աշխատում է փոքրի կանգնել և թույլությունից ընկնելիս կարող է իրեն վնասել դիպչելով մսուրին: Վերջինս կարելի է դնել ծրննդյան 18—20-րդ որը, յերբ հորթուկը բավականին ամրապնդված կը լինի: Մսուրները սուր յեղրներ չպիտի ունենան, փորովհետև հորթուկները ախոռում խաղալիս անկյուններին դիպչելով կարող են իրենց վնասել:

Ոգտակար է շինել հորթանոցներ նաև մեծ չափերով, այն է $3\frac{1}{2}$ -ական արշին յերկարությամբ և լայնությամբ. նման ախոռներում պետք է պահել հասակով մեծ կամ խոշոր և արագ մեծացող հորթերին:

Հորթանոցը պիտի հետևյալ հարմարություններն ունենա. —

1. Հորթանոցը պիտի կամ անասնանոցի բակում և կամ նրան մոտ տեղ լինի. վերջին դեպքում հորթանոցի մուտքը պիտի տաք լինի:

2. Հորթանոցը պիտի լուսավոր և մաքուր: Մաքրության պահապանման տեսակետից ցանկապատի փայտերը հաճախ պիտի լվալ, քիչ քանակությամբ կարբոլյան թթվում ջրով խառնած, իսկ առաստաղն ու պատերը տարեկան 2—3 անգամ սպիտակացնել կրով կամ կավիճով հետը խառնելով մի քիչ լեղակ: ճանճերից ազատ մնալու համար:

3. Հորթանոցը պիտի լավ ոգավորություն ունենա (вентиляция):

4. Հորթանոցի հատակը բետոնից կամ ցեմենտից պիտի լինի: Հատակի վրայի գերանների տախտակները պիտի շարած լինին այնպես, վոր տախտակների և հատակի մեջ ողի շերտ մնա:

5. Հորթերի վոտների տակ ձգված ծղնոտը պիտի լինի մաքուր և հարկավոր քանակությամբ:

6. Հորթանոցի ջերմության աստիճանը $+10^{\circ}-R$ ցածր չպիտի լինի, ուստի անհրաժեշտ է հորթանոցում վառարան ունենալ:


7. Լավ կը լինի հորթանոցում ունենալ մի յերկու ավելորդ ախոներ, վորպեսզի հորթերին հարկավոր դեպքում տեղափոխելու ժամանակ կարողանան հատակը հիմնվորապես մաքրել ու լվանալ: Այդ նպատակի համար հատակը պիտի շարժական շինել, վորի տախտակները կարելի լինի դուրս տանել հորթանոցից, լվանալ և չորացնել. անհրաժեշտ է տախտակների տակի կուտակված կեղտը ևս մաքրել:

8. Տաք որերին ոգտակար է հորթերին տեղափոխել ուրիշ շենք. իսկ հորթանոցը սպիտակացնել և պատերը, ախոսը, մսուրը, հատակը և այլն՝ լվանալ: Յեթե այս բոլորը ճշտությամբ կատարվեն, հիվանդության դեպքերը կը պակասեն:

1912 թվի վերջին, յես վորոշեցի հորթերին հագցնել յերախակալներ և այդպես պահել 2—3 շաբաթ, վորից հետո հանել: Իր կյանքի առաջին որերին, հորթուկը հաճախ հատակի ծղոտն և կուլ տալիս, վորը մարսողական գործառանների նուրբ լորձաթաղանթը գրգռելով, առաջ և բերում ստամոքսի սուր կատար, անգամ՝ բորբոքում: Բազմիցս այդ բանը հաստատվել է սատկած հորթուկի գիակը բացելուց հետո:

Մի այլ նկատառում ևս ինձ գրգել է յերախակալ գործածել. դույլից հորթուկը կաթ խմելուց հետո, սովորաբար սկսում է մսուրի, կերակրամանի և նման բաների պատերը ծծել: Խնչքան ել հորթանոցը մաքուր պահվելիս

լինի, հնարավորութիւնից զուրկ չե փոշու և այլ կեղտերի լիղելը: Կաթ խմելուց առաջ յերեխակալը հանվում է և



Նկար 1.

խմելուց հետո հազցնվում: Հետեյալ նկարը ցույց է տալիս հորթուկը՝ յերախակալով.—

Յերախակալի ձևը և մեծութիւնը վերցրած է Շվեյցարիայից բերած մողելից (կաղապարից): Յերկրորդ նկարը յերախակալն է, վորի չափը հետեյալն է.— խորութիւնը $3\frac{3}{8}$

վերշուկ, վերին մասի լայնութիւնը $3\frac{3}{4}$ վերշ., իսկ ներքինը՝ $2\frac{7}{8}$ վերշ.: Ներքեի մետաղյա մասից մինչև ցանցը յեղած տարածութիւնն է $1\frac{1}{8}$ վերշ., ներքեի մետաղյա մասի ծակերը $\frac{1}{8}$ վերշ., իսկ ցանցի աչքերի լայնութիւնը $\frac{1}{2}$ վերշ.:



Նկար 2.

Հորթուկին հորթանոցում տեղավորելուց հետո, նրան ծածկում են տապճակով (ПОПОНА) կամ մաքուր պարկով (МЕШОК):

Ծնելուց 4—6 ժամ հետո, կովը կթվում է և կաթը դույլով իսկույն և յետ տրվում է հորթուկին, վորին սկզբում

մատով են կերակրում: Խմեցնելու ժամանակ մատը ատիճանաբար բերանից սխտի հանել և այդպիսով վարժե-

ցնել հորթուկին կաթը խմել առանց կողմնակի ոգնության: Վորքան շուտ վարժվեն հորթերը, այնքան լավ, վորովհետև, յերբ արագ են սկսում խմել, արագ ել մեծանում են: Առանց կողմնակի ոգնության հորթերը սովորաբար սկսում են խմել յերրորդ կամ շորրորդ օրը: Դույլը և չափելու շտոֆը նախապես՝ խմեցնելուց առաջ, մի անգամ ել յեռացրած ջրով վողողում են մեկրորդներին՝ վոջնչացնելու համար: Հորթին կաթ տվողի ձեռքերի յեղունգները կտրտված պետք է լինեն, վորովհետև նրանց տակ բակտերիաներով կեղտ է հավաքվում, վորը կարող է հորթուկի ստամոքսը ընկնել և առաջ բերել բորբոքում: Կաթ տալուց առաջ ձեռքերը պիտի սապնով մանրակրկիտ լվալ և ընդհանրապես վորքան կաթ խմեցնելը մաքուր է կատարվում, այնքան հորթերի մեջ հիվանդություններ քիչ են յերևում: Մաքրության հետեւելը առանձնապես կարևոր է հորթուկի կյանքի առաջին օրերին:

Հորթուկն առաջին օրերը ստանում է դալ: Սովորաբար դալը օրեկան տրվում է յերեք անգամ, վորի ժամանակ, առաջին կերը խոշոր և առողջ հորթուկի համար պետք է լինի ու վոջ ավել 2 ֆունտից, իսկ թույլին՝ 1 ֆունտից: Պիտի ավելացնել, վոր դալ անպայման պիտի տալ, վորովհետև առանց դալի հորթուկի ստամոքսը չի մաքրվում նախնական կղկղանքից, հորթը իրեն վատ է զգում և հիվանդանում է:

Մինչև 2—3 շաբաթական հասակը, հորթուկը ստանում է իր մօր կաթը, իսկ հետո նրան ընդհանուր կաթից են տալիս:

Հիվանդ ու թույլ հորթերին օրեկան 4-5 անգամ են կաթ տալիս, իսկ առողջներին՝ 3 անգամ: Անհրաժեշտ է կաթը տալ միշտ վորոշ ժամանակին և համահավասար քաժիններով: Պետրովսկ. գյուղատնտեսական Ակադեմիայի ֆերմայում հորթերին կաթ է տրվում տափոտյան ժամը 4-ին. կեսօրվա՝ 11-ին և յերեկոյան՝ 7-ին:

Հորթուկի դռնը ամեն կաթ տալուց հետո մաքուր շորով պիտի սրբել, վորովհետև յերբ չի սրբվում, շուրթերի մազերը թափվում են և հաճախ ել յերևան ե գալիս մի տեսակ հիվանդություն. — «կաթնուկ», եկզեմայի և քոսի հման, վորից՝ հետագայում շատ դժվար ե լինում ազատվել:

Յեթե հախիրը վարակված ե թոքախտով կամ այդ տեսակետից կասկածելի կովեր կան, պիտի հետևել, վոր հորթերին առողջ և վոչ թոքախտավոր կովերի կաթ տրվեն: Այս կանոնի պահպանումը տարեցտարի հիվանդ կենդանիների տոկոսը կարող ե պակասեցնել հախիրի մեջ:

Կաթ տալու ժամանակ յես պահպանում եյի ֆէրմայի հախկին տարիների ընդունված նորմայի մեջ իմ մտքած մի քանի փոփոխությունները: Այդ աղուսյակը հետևյալն ե. —

Աղյուսակ № 1

ՀԵՍԵԿԸ (շաբաթներ)	Ո Ր Ե Կ Ա Ն Տ Ը Վ ՈՒՄ Ե								
	Կ Ա Թ Շ Տ Ո Ֆ Ն Վ Ը Վ *						Ֆ ՈՒՆ Տ		
	Ա ն ա ը ա տ			Ք ա շ ա ծ			Վարսակի մասը	Ք ե փ	Վարսակ
	Առավ.	Կեսոթ.	Յեր.	Առավ.	Կեսոթ.	Յեր.			
1-ին . . .	1	1	1						
2-ին . . .	1,5	1	1,5						
3-ին . . .	2	1,5	2						
4-ին . . .	2,5	2	2,5						
5-ին . . .	2,5	2	2,5						
6-ին . . .	2	2	2,5						
7-ին . . .	2	1,5	2	0,5	0,5	0,5	0,5	—	1
8-ին . . .	1,5	1	1,5	1	1	1	1	—	2
9-ին . . .	1	0,5	1	1,5	1,5	1,5	1,5	—	3
10-րդ . . .	0,5	—	0,5	2	2	2	2	—	3,5
11-րդ . . .	—	—	—	2,5	2	2,5	2	0,5	3,5
12-րդ . . .	—	—	—	2	1,5	2	2	1	3,5
13-րդ . . .	—	—	—	1,5	1	1,5	2	1,5	3,5
14-րդ . . .	—	—	—	1	0,5	1	2	2	3,5
15-րդ . . .	—	—	—	0,5	—	0,5	2	2	3,5
16-րդ . . .	—	—	—	—	—	—	2	2	4

*) Շ առ ֆ ը = 3 ֆունտը կաթի կամ հալառար ե 2 շի և 5 բաժակի:

Այս աղյուսակը ծառայում էր իբրև սխեմա հորթերին կաթ տալու ժամանակ:

Սկզբում հորթերը շատ դժկամությամբ են ուտում սաղ — սաղ վարսակը, ուստի և վերջինս փոխարինվում էր թեփով և վարսակի ալյուրով, այսինքն մի ֆունտ վարսակի տեղ տրվում էր կես ֆունտ թեփ և կես ֆունտ վարսակի ալյուր:

Հորթերի մեջ հիվանդություններ սովորաբար նկատվում են առաջին և յերկրորդ շաբաթներում և յերբեմն՝ յերեսը քաշած կաթին անցնելու ժամանակ:

Թեփն ու վարսակի ալյուրը սկզբում դուլլի մեջ յեռացրած ջրով խառնվում, խաշվում էյին, հետո վրան ավելացվում էր թե անարատ և թե քաշած կաթ. յերեսը քաշած կաթի քանակության պակասեցումով, ավելացվում էր շատ ջուր:

Հորթերին կերակրելիս յես նկատեցի, վոր նրանք միայն կաթն են խմում, իսկ թեփն ու վարսակի ալյուրը մեծ մասամբ թողնում էյին դուլլի հատակին և ուտում էյին միմիայն շատ քաղցած ժամանակ, վորից հետո սովորաբար նրանց մարսողությունը խանգարվում էր:

Վերջերս հորթերին խմեցնելու փորձերի ժամանակ նկատվել է, վոր հորթը կաթով հարած վարսակի ալյուրը դժկամակությամբ է խմում. ավելի լավ է այդ բանը պատրաստել կես ֆունտ թեփից և մի քառորդ ֆունտ քուսպից, վորը խառնվում է յեռացրած ջրով և վրան ել ավելացվում յերեք ֆունտ կաթ: Վերջին խառնուրդը խմեցնելու ժամանակ, շարունակ պիտի խառնել, վորպեսզի թեփն ու քուսպը տակը չմնան, այն ժամանակ հորթը խմում է և՛ լավ և՛ առանց մնացորդի:

Հավաքած դիտողությունների հիման վրա կարիք զգացվեց հորթերին կեր տալը մի քիչ փոփոխել և պահպանել հետևյալ աղյուսակը: —

Աղյուսակ № 2.

ՀԵՍՈՒՄ	Որեկան տրվելիք կարը շահմանում						Փոխանորդ		
	Ա. ն ա ր ա տ			Ք ա շ ա ծ			Ծեծած	Վարսակ	Թեփ
	Առավ.	Գետը.	Յերեկ.	Առ.	Գետը.	Յերեկ.			
(Հարաթները)									
1-ին	1	1	1						
2-րդ	1,5	1	1,5						
3-րդ	1,5	1,5	1,5						
4-րդ	1,5	1,5	1,5						
5-րդ	2	1,5	2						
6-րդ	1,5	1	1,5	0,5	—	0,5	1,5	—	—
7-րդ	1,5	1	1,5	0,5	0,5	0,5	1,5	0,5	0,5
8-րդ	1,5	1	1,5	1	0,5	1	2	1	1
9-րդ	1,5	1	1,5	1	1	1	2,5	1,5	1,5
10-րդ	1	1	1	1,5	1	1,5	3	1,5	1,5
11-րդ	1	0,5	1	1,5	1,5	1,5	3	2	2
12-րդ	1	0,5	0,5	1,5	1,5	1,5	3,5	2	2
13-րդ	0,5	—	0,5	1,5	1	1	4	2	2
14-րդ	—	—	0,5	1	1	1	4	2,5	2,5
15-րդ	—	—	—	1	1	1	4,5	2,5	2,5
16-րդ	—	—	—	0,5	0,5	0,5	5	2,5	2,5
17-րդ	—	—	—	0,5	0,5	0,5	5,5	3	3
18-րդ	—	—	—	0,5	—	0,5	6	3	3
19-րդ	—	—	—	—	—	0,5	7	3	3

Այս աղյուսակից յերևում է, Վոր անարատ և քաշած կաթի ընդհանուր քանակը մնացել է նույնը, միայն տրվում է ավելի յերկար ժամանակ: Ինչ վերաբերում է թեփի, վարսակի ալյուրի և վարսակի տալուն, յես դա յել փոխեցի այսպես. — վարսակի ալյուրի և սաղ-սաղ վարսակի փոխարեն տրվում է ծեծած վարսակ, Վորը հորթիկները ավելի լավ են ուտում: Այս դեպքում ել սովորական կերի ընդհանուր քանակը համարյա թե նույնն է մնում:

Ծեծելու համար վերցվում են լավ և չոր վարսակ, թեփն ել գործ է ածվում ամենալավ հատկության — ցորենի թե մեկը և թե մյուսը տրվում են իրար հետ խառնած և չոր դրությամբ:

Խիստ կերպով պիտի հետևել, Վոր ծեծած վարսակը թեփի հետ տալուց առաջ մսուրները մաքուր լինեն, մնա-

ցորդները նոր կերի տալուց առաջ պիտի դեն ածել և մանրակրկիտ մաքրել մսուրները:

Թեփի և ծեծած վարսակի խառնուրդը հորթերին սկսում են տալ 7-րդ շաբաթվանից. սկզբում հորթերը այդ խառնուրդը սիրով չեն ուտում, բայց հետո վարժվում են: Կաթը տալուց յերկու ժամ հետո տրվում է մաքուր ջուր. կաթից կտրելուց հետո սկզբներում ջուր տրվում է որեկան յերեք անգամ, իսկ հետո՝ ամբողջ մեծ հասակում (5 — 6 ամսական) յերկու անգամ:

Այս վերջին նորմաներով Ակադեմիայի ֆերմայում հորթերին կաթ տալը կատարվում էր մինչև 1913 թվականը, վորից հետո կարիք զգացվեց նոր նորմաների կադմության խնդրով զբաղվել. դիտողությունները ցույց տվին, վոր հորթերը յերկու տարեկան հասակում հարկավոր զարգացման չեյին հասնում և մնում էյին կերպակաւ:

Արտասահմանյան նորմաները վերաբննելիս յես կանգ առա շվեյցարականի վրա, վորոնց մի քիչ կերպարանափոխեցի: Այդ նորմաները գործադրելով, հորթերն ունենում էյին լավ քաշ և յերկու տարեկան հասակում հասուն կովերի տեսք էյին ստանում, իսկ առաջնածինները տարեկան տալիս էյին 300 վեզրո կաթ:

Ներկայումս մեզ մոտ ընդունված այդ նորմաները հետևյալներն են. (Տես 3-րդ աղյուսակ 31-րդ յերեսում):

Այս չափերը համեմատելով նախկին գործադրվածների հետ, մենք նկատում ենք մեծ տարբերություն, նոր չափերով կաթը միմիայն անարատ դրությամբ է տրվում: Ազնվացեղ նախիրների մեջ հորթերին լավ է միմիայն անարատ կաթ տալ, վորովհետև հորթը բնական անունդ քստանալով ամբողջ քիչ է հիվանդանալու վտանգին յենթակա. անարատ կաթը չափազանց քիչ բակտերիաներ է պարունակում, քան՝ քաշածը:

Նենց վոր կաթի քանակը սկսում են պակասեցնել, հորթուկին ջուր է տրվում: Տաք ջուր (որինակելի յե 25 — 28°)

պետք է տալ ցերեկը, որեկան մեկ անգամ՝ մինչև 17-րդ շաբաթը, եւ ել կաթը տալուց յերկու ժամ հետո: Այդ

Աղյուսակ № 3.

ՀԱՄԱՐ (Շաբաթները)	Որեկան սպում եւ ցածներով						Ֆունտներով		
	Անարատ կաթ			Չ ս ս			Մեծածվարակ	Թեփ	Խոտ
	Աս.	Կետր	Յեր.	Աս.	Կետ.	Յեր.			
1-ին . . .	1	1	1						
2-րդ . . .	1,5	1,5	1,5						
3-եղ . . .	2	1,5	1,5						
4-րդ . . .	2,5	2	2,5						
5-եղ . . .	2,5	2,5	2,5						
6-րդ . . .	2,5	2,5	2,5						
7-րդ . . .	2	2	2		1				
8-րդ . . .	2	2	2		1,5				
9-րդ . . .	2	2	2		1,5				
10-րդ . . .	2	1,5	2		2				
11-րդ . . .	2	1	2		2,5				
12-րդ . . .	1	1	2		2,5				
13-րդ . . .	1	1	2		3				
14-րդ . . .	1	1	1,5		3,5				
15-րդ . . .	1	1	1,5		4				
16-րդ . . .	1	1	1,5		4				
17-րդ . . .	1	1	1	2	1	1			
18-րդ . . .	1	1	1	2	1	1			
19-րդ . . .	1	—	1	2	2	1			
20-րդ . . .	1	—	1	2	2	1			
21-րդ . . .	1	—	1	2	2	1			
22-րդ . . .	—	—	1	2	2,5	2			
23-րդ . . .	—	—	1	2,5	2,5	2			

ժամանակից, որեկան ջուր եւ տրվում յերեք անգամ, վորի ժամանակ չորրորդ ամսվա վերջից ջուրը լինում է սովորական ջերմությամբ:

Վարսակը ծեծած դրությամբ եւ տրվում: Վարսակի եւ թեփի տալը սկսվում է 7-րդ շաբաթից խառնած դրությամբ՝ $\frac{2}{3}$ -ը վարսակ, $\frac{1}{3}$ -ը թեփ. նման խառնուրդ հորթուկին տրվում է՝ վորքան նա կը կարողանա ուտել:

Ներկայումս հորթերի համար ընդունված նորմաները հանձնարարելի յեն յեղջուրավոր անասունների խոշոր ցեղերին, որինակ՝ շվիցական, սլամենտալ, հոլլանդական եւ այլն. փոքրահասակ ցեղերի համար, որինակ՝ նիթեգորոգյան,

վրադիմիրյան, անգելնյան և այլն, կարելի չե պահպանել Աղյուսակ № 2-ի նորմաները:

Հորթերին 5—6 շաբթական հասակից տալիս են մի քիչ կերակրի աղ, կավիճ և այրված վոսկորների ալյուր: Կավիճ և վոսկր յուրաքանչյուրին տրվում է որեկան մի մատնոցից վոչ շատ:

3—4 շաբթական հորթերին տրվում է խոտ և են ել միշտ լավ տեսակի. սկզբում որեկան մեկ ֆունտ խոտ, իսկ հետո աստիճանաբար ավելացնելով՝ քսաներորդ շաբթում հասնում է որեկան 4—6 ֆունտի:

Հորթերին խնամատարության ժամանակ անընդհատ պիտի հետևել ու դիտել. նրանցից մի քանիսը սկզբում լավ են խոտ ուտում և մոտ չեն դալիս թեփին ու ծեծած վարսակին, իսկ մյուսները՝ ընդհակառակը: Հորթերը բաղցած չմնալու համար պետք է հետևել նրանց, և ախորժակի համեմատ մեկ կամ մյուս կերն ավելացնել: Ընդհանրապես վերև հիշված աղյուսակներից պիտի ոգտվել իբրև ուղեցուցիչներից, շարունակ շեղվելով նրանցից մեկ՝ կամ մյուս կողմը, ի նկատի ունենալով հորթուկի առանձնահատկությունները:

Ձմեռը հորթերը պահվում են անասնանոցի բակում, իսկ գարնանը և ամառը քչվում են արոտ, փորտեղ և՛ զբոսնում են և՛ արածում: Հորթերին դուրս են բերում, յերբ ցողը վերկացած է լինում և հողը—չորացած՝ անձրևային յեղանակներին հորթերին պահում են ախոռներում, մինչև գետնի չորանալը: Եղ հորթերին մոզիներից ջուկ են արածեցնում:

Հորթերի համար պիտի ընտրել չոր և խոտառատ արոտատեղ, փորտեղ հորթերի համար պիտի շինել թեթև ծածկոցներ՝ անձրևից, շոգից և բոռերից պաշտպանվելու համար:

Կաթից հորթերին կտրելուց հետո, նրանք ընկնում են մի առանձին ցուցակ, փորով կերը ամսական փոխվում է մեկ կամ յերկու անգամ: Մինչ մի տարեկան հորթուկի

կերի քանակի մասին չեր խոսում, վորովհետև վերջինս հորթերին ամեն անգամ նայելուց հետո յե նշանակվում: Միշտ պիտի հետևել, վոր եզ հորթերը (ֆերմայի մի տարեկան չղարձած մողիները ծախվում են) չգիրանան, ուտի և արտաքին տեսքի և կենդանի քաշի համեմատ ել ավելացնում կամ սլակասեցնում են ընդհանուր կերը:

Ընդհանրապես կարելի չե ասել, վոր 30 շաբթական հորթուկի ընդհանուր կերի (ծեծած վարսակ և թեփ) քանակը համնում է որեկան 10 — 12 ֆունտի, իսկ մի տարեկանին՝ մոտ 12 — 14 ֆունտ:

Արոտ տանելու ժամանակ, հորթերը՝ նայած արոտի վորակին, ստանում են 2-ից մինչև 6 ֆունտ ծեծած վարսակ և թեփ: Յեթե արոտը լավն է, տալիս են 2 ֆունտ, իսկ յեթե վատը՝ 6:

Յեղընտիր հորթերին մինչև յերկու տարեկան հասակը չպետք է ուժեղ կերը խնայել: Պիտի հիշել, վոր մատաղ հասակում վատ կերակրված հորթերը տնտեսության համար վնասակար են, մի յերևույթ՝ վորը շարունակ նկատվում է Ռուսաստանում, ուր անասունները մեծի տեսք են ստանում 4 — 5 տարում, մինչդեռ արտասահմանում միմիայն 2-րդ տարում:

Վերջին տարիներում վորոշ գործնական մեծ նշանակություն ունեցող գիտողություններ են կուտակվել, վորոնց մասին կը ցանկանայի ընթերցողներին տեղյակ պահել. այդ գիտողությունները հետևյալներն են. —

Թոքախտավոր կովերի հորթերը հաճախ են հիվանդանում և սատկում:

Հորթերի շատ կուտակված լինելու դեպքում առաջ են գալիս հիվանդություններ, ուստի ցեղընտիր տնտեսություններում հորթանոցները շինվում են մեծ և լուսավոր:

Կովերին կերակրելով չափից դուրս շատ քուսպով և սառած կամ փչացած արմատապտուղներով, հորթերը հիվանդանում են ստամոքսի խիստ խանգարումով և կամ

արյունով փորլուծությամբ, ուստի յեթե տնտեսության մեջ նման կեր կա, պետք է աշխատել տալուց առաջ լավ հալվի Ամենից լավն է այն կովերին, վորոնց կաթով կերակրվում են հորթերը, փոքր քանակությամբ քուսպի հետ թեփ խառնել և որեկան տալ 3—4 ֆունտ:

Հիվանդ հորթերին պիտի առանձնացնել, ուրիշ շենք տանել և առանձին դուլլով ել խմեցնել:

Կաթի ջերմությունը միշտ պիտի լինի 33—35°:

Յերբ հորթերը տառապում են փորլուծությամբ, իսկույն պիտի կղկղանքը հեռացնել և միշտ փռել վոսնների տակ մաքուր ծղնոտ: Յեթե այդպես չանվի, այն ժամանակ կղկղանքը շուտ տարրալուծվում է և հորթանոցը լցվում առանձնահատուկ հոտով:

Մեզմ բնավորությամբ յեզներ ստանալու համար, հորթերի հետ միշտ քնքշությամբ պիտի վարվել:

Մեծ հասակ ունեցող 8—10 ամսական—հորթերին, ձմեռվա լավ յեղանակներին դբոսանքի պիտի տանել, վորից հետո նրանց ախորժակը բացվում է և այդ դեպքում ել նրանք քիչ են հիվանդանում: Կաթ պետք է տալ զբոսանքից կամ յերկու ժամ առաջ և կամ յերկու ժամ հետո:

Հորթերին չափավոր կաթ տալու դեպքում, յերբ իր ամբողջ կյանքում նա գործ է ածելու 50—60 վեդրո—պիտի տալ որեկան 18 ֆունտից վոչ ավելի. այդ ամբողջը պիտի տարածել, ձգել վորքան կարելի յե յերկար տևողության վրա, մինչև 6—7 ամիս: Այս դեպքում հորթերն ավելի նուրբ և գեղեցիկ կազմ են ունենում:

Արագ մեծանում են այն հորթերը, վորոնց կերակրում են աղյուսակ № 3-ով, ինչպես հիմա սովոր են ասել, ոռւս-շվեյցարական սխեմայով: Բայց վորպեսզի հորթերը ավելի լավ դարգանան, կաթի և ընդհանուր կերի տալը մի քիչ պիտի փոփոխել: Կաթ, ուժեղ կեր և խոտ պիտի տալ հետևյալ ձևով. —

Աղյուսակ № 4.

ՀԱՅԵՐ	Անտրառ կարը գտնվելով			Տ ու լ ր		Հավ ծեծած վարակ ֆունտ	Քեֆի և վուշի քուսակ խառ- նուրդ (հավա- սար քանակ.) ֆունտերով	Հավ վորակի հատ. ֆունտ.
	Ասավ.	Կետր.	Յեր.	Կետր.	Յեր.			
1-ին շաբաթ .	1	1	1					
2-րդ » .	1,5	1	1,5					
3-րդ » .	1,5	1,5	1,5					
4-րդ » .	2	1,5	2	—	—	—	—	$\frac{3}{4}$
5-րդ » .	2	2	2	—	—	—	—	$\frac{3}{4}$
6-րդ » .	2	2	2	—	—	—	—	1
7-րդ » .	2	2	2	—	—	0,5	0,5	1
8-րդ » .	2	1,5	2	0,5	—	0,5	0,5	1,5
9-րդ » .	1,5	1,5	2	1	—	$\frac{3}{4}$	0,5	1,5
10-րդ » .	1,5	1	1,5	1	1	1	1	1,5
11-րդ » .	1,5	1	1,5	1	1	$1\frac{3}{4}$	1	2
12-րդ » .	1	1	1,5	1,5	1	2	1	2,5
13-րդ » .	1	1	1,5	1,5	1	2	1,5	3
14-րդ » .	1	1	1	1,5	1,5	3	1,5	4
15-րդ » .	1	1	1	1,5	1,5	3,5	2	4,5
16-րդ » .	1	1	1	1,5	1,5	3,5	2	5
17-րդ » .	1	0,5	1	2	1,5	3,5	2	5,5
18-րդ » .	1	0,5	1	2	1,5	4	2	6
19-րդ » .	1	—	1	2	2	4	2	6,5
20-րդ » .	1	—	1	2	2	5	2	7
21-րդ » .	1	—	1	2	2	5,5	3	7
22-րդ » .	1	—	1	2	2	6,5	3	7
23-րդ » .	0,5	—	1	2,5	2	7,5	3	7
24-րդ » .	0,5	—	1	2,5	2,5	7,5	3	7
25-րդ » .	—	—	1	2,5	2,5	7,5	3	8
26-րդ » .	—	—	1	2,5	2,5	8	3	8
27-րդ » .	—	—	1	2,5	2,5			

Այս աղյուսակով կերակրելով հորթերին, թե № 3 աղյուսակով, կարելի չե տեսնել, վոր հորթերը հրաշալի զարգանում են և ամեն որ ել իրենց քաշի մեջ ավելանում. վորի ժամանակ № 3 աղյուսակով կերակրելիս որեկան ափելանում են $2 - 2\frac{1}{2}$ ֆունտ, իսկ նույն կերակուրը ավելի յերկար տևողության ընթացքում տալու դեպքում՝ $1\frac{1}{2} - 2$ ֆունտ:

Կաթից կտրվելուց հետո ուժեղ կերով խնամելու ժամանակ, նրանք ավելանում են որեկան $1\frac{1}{2} - 2$ ֆունտ:

Ավելի առատ կաթ տալու դեպքում, յերբ հորթուկը

իր կաթնակերութեան ամբողջ ընթացքում խմում է 70—90 գուլլ կաթ, կենդանի քաշի որեկան ավելացումը հավասար է լինում յերեք ֆունտի. Այս դեպքում հորթերը լինում են խոշոր, տեսքը՝ գեր, բայց թմրած և հիվանդանալու հակում ունեցող: Յերը հորթերը շատ կաթ են խմում և ոգտվում են զբոսանքներից, ավելի լավ են զարգանում, գիրանալու յել հակում չեն ունենում. բայց զբոսանքներից հորթերն ոգտվում են միայն ամառը: Չմեռը ախոռի խրհամքի ժամանակ, հորթերն սոսա կերակրից սաստիկ գիրանում են, հաճախ ել հիվանդանում ու սատկում. իսկ յերը ձմեռը հորթերին դուրս են բերում զբոսանքի, այդ դեպքում ել հորթերը հաճախ թոքերի բորբոքում են ստանում, վորը մահով է վերջանում: Առատ կաթով անված հորթերի գիակների բացումից յերեացել է, վոր նրանց ներքին գործարանները ճարպային հաստ շերտով են ծածկված, իսկ մի քանիսների վրա նկատվել է սրտի ճարպային ալյապերում:

Վերջին տարիների գիտողությունները ցույց են տալիս, վոր հորթերի խնամքը պիտի տանել № 3 աղյուսակով կամ վերջին № 4-ով:

Ֆերմայում ընդունված է ամեն ամսի սկզբին ամբողջ յեղջուրավոր տավարի նախիրը կշռել վորոշ, խիստ սահմանված ժամանակ: Այս կշռումները ցույց են տալիս, թե ինչպես է փոփոխվում հորթուկի քաշը: Յեթե հորթը ուտում է, բայց նիհարում և վատ է զարգանում կամ բոլորովին իր քաշում չի ավելանում, դա ցույց է տալիս, վոր նա վորեւե հիվանդություն ունի, իսկ յեթե 1—2 ամսում այդ հիվանդությունը չի անցնում, ավելի լավ է մորթել:

Մի տարեկան հասակից հորթերը արոտ են տարվում, կովերի հետ միասին: Մեկուկես տարեկան հասակից մինչև առաջին ծինը, հորթերն ախոռի կերի ժամանակ որեկան ստանում են 12—14 ֆունտ խոտ, վարսակի ծղնոտ կամ դարման 4—6 ֆունտ, քուսպ 3 ֆունտ և թեփ 3 ֆունտ:

Յերինջները «բուղով են գալիս» 1 տարի 10 ամսական կամ 2 տարեկան հասակում, հայելով նրանց զարգացմանը իսկ մողինները հախիրն են անում իրրի «բուղա» մեկուկես տարեկան հասակում:

Յեղընաիր հախիրի հորթերին պայմանական նշաններ են դնում հետազայում նրանց չչփոթելու համար: Սովորաբար նրանց ականջներից կախում են մետաղյա կլոր կամ յերկարավուն թիթեղներ համարների համար. նման նշան-



Նկար 3.

ները ժամանակի ընթացքում կորչում կամ մաշվում են, մանավանդ, յերբ անասունները մացառուտներում են արածում: Ամենից լավը կլոր մետաղի նշաններն են, վորոնք ընդունված են Շվեյցարիայում: Պետրովսկ. Ակադեմիայի ֆերմայի հորթերի ականջին շատ մատաղ հասակում, յերբ այդ անվտանգ ե լինում, նշան են դնում հատուկ ձեռք

բերված ականջի ունեւիքով: Կարգին կատարված նման նշանը չի այլասերում ականջները և հնարավորություն ե տալիս հորթերին իրար հետ չչփոթել: Պիտի հետեւել, վոր կտրված մասը բոլորովին ականջից բաժանվի «սաղա-հալուց», լցվելուց խուսափելու համար, վորը պատահում ե № 2 կամ № 20 ականջի մեջ տեղը ծակած նշանների հետ:

Յեղընաիր տնտեսություններում անհրաժեշտ ե հորածին հորթերի առանձին ցուցակներ պահել, նման գրքում գրվում ե այն բոլորը՝ ինչ վոր վերաբերում ե հորթուկին. — ծագումը, ծնողների անունները, ծնված ժամանակի կենդանի քաշը և այլն: Պետրովսկ. Ակադեմիայի ֆերմայում այդ նպատակով առանձին գիրք ե պահվում, վորի որինակը ներքեում բերվում ե. —

Շվեդական ցեղից

		Անունը և զույգը	Ծննդյան ժամանակը	Քաշը ծննդյան ժամ.	Մոր անունը №-ը և որ անունը №-ը	Ցեղական դրբի №-ը	Ժ Ա Ն Ո Թ Ո Ւ Թ Ց Ո Ւ Ն																																																																																																																																			
512	Զորկա	1913 թ. փետր. 7	Ֆ. 90	Զուլտուշ- կա—66 Դուճայ — 15			Կենդանի քաշը 1913 թ. <table><tr><td>VI</td><td>VII</td><td>VIII</td><td>IX</td><td>X</td><td>XI</td><td>XII</td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr><tr><td>6¹⁰;</td><td>6²⁰;</td><td>7¹⁰;</td><td>7¹⁴;</td><td>7²⁴;</td><td>9;</td><td>11;</td><td>12;</td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr></table> 1914 թ. <table><tr><td>I</td><td>II</td><td>III</td><td>IV</td><td>V</td><td>VI</td><td>VII</td><td>VIII</td><td>IX</td><td>X</td><td>XI</td><td>XII</td><td></td><td></td><td></td></tr><tr><td>13¹⁰;</td><td>15;</td><td>16²⁰;</td><td>17²⁰;</td><td>18;</td><td>19;</td><td>20²⁰;</td><td>22²⁰;</td><td>22²⁰;</td><td>22²⁰;</td><td>22²⁰;</td><td>22²⁰;</td><td>24²⁰;</td><td></td><td></td></tr></table> 1915 թ. <table><tr><td>I</td><td>II</td><td>III</td><td>IV</td><td>V</td><td>VI</td><td>VII</td><td>VIII</td><td>IX</td><td>X</td><td>XI</td><td>XII</td><td></td><td></td><td></td></tr><tr><td>25;</td><td>24²⁰;</td><td>26²⁰;</td><td>27²⁰;</td><td>27²⁰;</td><td>28²⁰;</td><td>28²⁰;</td><td>28²⁰;</td><td>28²⁰;</td><td>29¹⁰;</td><td>30;</td><td>31²⁰;</td><td>31²⁰;</td><td></td><td></td></tr></table> 1916 թ. <table><tr><td>I</td><td>II</td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr><tr><td>32;</td><td>33</td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr></table>												VI	VII	VIII	IX	X	XI	XII									6 ¹⁰ ;	6 ²⁰ ;	7 ¹⁰ ;	7 ¹⁴ ;	7 ²⁴ ;	9;	11;	12;								I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				13 ¹⁰ ;	15;	16 ²⁰ ;	17 ²⁰ ;	18;	19;	20 ²⁰ ;	22 ²⁰ ;	22 ²⁰ ;	22 ²⁰ ;	22 ²⁰ ;	22 ²⁰ ;	24 ²⁰ ;			I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				25;	24 ²⁰ ;	26 ²⁰ ;	27 ²⁰ ;	27 ²⁰ ;	28 ²⁰ ;	28 ²⁰ ;	28 ²⁰ ;	28 ²⁰ ;	29 ¹⁰ ;	30;	31 ²⁰ ;	31 ²⁰ ;			I	II														32;	33													
VI	VII	VIII	IX	X	XI	XII																																																																																																																																				
6 ¹⁰ ;	6 ²⁰ ;	7 ¹⁰ ;	7 ¹⁴ ;	7 ²⁴ ;	9;	11;	12;																																																																																																																																			
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII																																																																																																																															
13 ¹⁰ ;	15;	16 ²⁰ ;	17 ²⁰ ;	18;	19;	20 ²⁰ ;	22 ²⁰ ;	22 ²⁰ ;	22 ²⁰ ;	22 ²⁰ ;	22 ²⁰ ;	24 ²⁰ ;																																																																																																																														
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII																																																																																																																															
25;	24 ²⁰ ;	26 ²⁰ ;	27 ²⁰ ;	27 ²⁰ ;	28 ²⁰ ;	28 ²⁰ ;	28 ²⁰ ;	28 ²⁰ ;	29 ¹⁰ ;	30;	31 ²⁰ ;	31 ²⁰ ;																																																																																																																														
I	II																																																																																																																																									
32;	33																																																																																																																																									
							«Բուդով և յեկել» մայիսի 21-ին 1915 թ. բուդան և Տամբուրը: Ծնել և փետրվարի 20-ին 1916 թ. 1916 թ. փետրվարի 20-ին համարվել և № 139 կով:																																																																																																																																			
513	Լուկավիյ	1913 փետր. 8	90	Լեկարկա —111 Դուճայ — 15			1913 թ. հուլիսի 20-ին ծախված և 210 ո. Ուրթուսի ղեմատվոյին:																																																																																																																																			

Հորթերին մեծացնելու յեզրակացության մեջ պետք է
ասել, Վոր այդ գործը պահանջում է մշտական հսկողու-

թյուն և այնպես ել հեշտ չե, ինչպես առաջին հայացքից
և յերևում:

Կաթը վորևե սուրբոգատով փոխարինելու հարցի մա-
սին յես չեմ խոսում, վորովհետև վորոշ փորձ և թվեր
այդ առթիվ չունեմ: Գիտական տվյալներ ել չկան, վոր
պարզենք, թե նման փոխարինումը ինչ ազդեցություն ունի
կաթնատվության վրա, ուստի ցանկալի չե, վոր հորթերի
մեծացնելու հարցով զբաղվելին առաջին հերթին մեր կեն-
դանատեխնիքական (зоотехнические) կայանները:

Շվեդական ցեղից

	Անունը և զույգը	Ծննդյան ժամանակը	Քաշը դրան ժամ.	Մոր անունը №-ը	Հոր անունը №-ը	Ցեղական գրքի №-ը	ԺԱՆՈՐԴԱԻԹՅՈՒՆ
512	Զորկա	1913 թ. փետր. 7	Ֆ. 90	Զուլտուշ- կա—66	Դունայ— 15		1913 թ. VI VII VIII IX X XI XII 6¹⁶; 6²⁴; 7¹⁴; 7³⁴; 9; 11; 12; 1914 թ. I II III IV V VI VII VIII IX X XI XII 13¹³; 15; 16³⁰; 17²⁶; 18; 19; 20³⁰; 22³⁰; 22³⁰; 22³⁰; 22³⁰; 24³⁰ 1915 թ. I II III IV V VI VII VIII IX X XI XII 25; 24³⁰; 26³⁰; 27³⁰; 27³⁰; 28³⁰; 28¹⁰; 28³⁰; 29¹⁰; 30; 31³⁰; 31³⁰ 1916 թ. I II 32; 33
						139	«Բուդով և յեկել» մայիսի 21-ին 1915 թ. բուդան և Տամբուրը Ծնել և փետրվարի 20-ին 1916 թ. 1916 թ. փետրվարի 20-ին հա- մարվել է № 139 կով:
513	Լուկավիյ	1913 փետր. 8	90	Լեկարկա —111	Դունայ— 15		1913 թ. հուլիսի 20-ին ծախ- ված է 210 ու Ուրծուսի գեմատվո- յին:

Հորթերին մեծացնելու յեզրակացության մեջ պետք է
ասել, Վոր այդ գործը պահանջում է մշտական հսկողու-

թյուն և այնպես ևլ հեշտ չե, ինչպես առաջին հայացքից
և յերևում:

Կաթը վորևե սուրբոգատով փոխարինելու հարցի մա-
սին յես չեմ խոսում, վորովհետև վորոշ փորձ և թվեր
այդ առթիվ չունեմ: Գիտական տվյալներ ևլ չկան, վոր
պարզենք, թե նման փոխարինումը ինչ ազդեցություն ունի
կաթնատվության վրա, ուստի ցանկալի յե, վոր հորթերի
մեծացնելու հարցով զբաղվելին առաջին հերթին մեր կեն-
դանատեխնիքական (зоотехническое) կայանները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ.

Ներածություն 3

I. ՀՈՐԹԵՐԻ ԿԵՐԸ ՅԵՎ ԽՆԱՄԻՔԸ ԱՐՏԱՍՍՀՄԱՆՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1. Հորթերի խնամքը Գերմանիայում 7
2. » » Շվեյցարիայում 9.
3. » » Բելգիայում 17
4. » » Դանիայում 18

II. ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄԻՔԸ ՊԵՏՐՈՎՍԿ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՖԵՐՄԱՅՈՒՄ



Главлит № 1256.

Тираж 2000.

Ժ. Տ. Գ. Խ. Պոլիգր. Բաժ. 4-րդ տպարան, Պուշկ. փ. 3

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003160

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Գ Ի Ն Ն Ե

1. Կովալենկո.—Քաղաքական գրագիտություն. . . 25 կ.
2. Ս. Կասյան.—Հայաստանի տնտեսական - դասա-
կարգային ստրուկտուրան. . . 15 կ.
3. Ս. Մարտունի.—Հովհ. Թումանյանի ստեղծա-
գործության սոցիալական արժեքը . . . 15 կ.
4. Հովհ. Բաջազնունի.—Հ. Հ. Դաշնակցությունն
անեկիք չունի այլևս . . . 75 կ.
5. Դեպի նոր կյանք—պիես
6. Կարմիր ռազմիկի հուշատետրը.
7. Լիլինա.—Կոմմունիստական ընտանիքից դեպի
կոմ. հասարակություն 75 կ.
8. Վ. Նիկոլսկի.—Ինչպես ոգտագործել կենդանի-
ների աղբը լավագույն կերպով . . . 20 կ.
9. Ն. Կուլագին.—Մեղուներին կերակրելը. . . 40 կ.
10. Մ. Փ. Իվանով.—Գյուղատնտեսական թռչունի
սնուցումը և գիրացումը . . . 20 կ.
11. Վ. Խարչենկո.—Հորթերի խնամքը . . . 15 կ.

ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊ.

Դրոմել

Издательство „Мартакоч“.
Тифлис, ул. Троцкого № 6.